ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Երևանի Վ.Տերյանի անվան հ60 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում հայտարարվել է մրցույթ դասվարի /11 ժամ/, ֆիզկուլտուրայի /22 դասաժամ/, ռուսերենի /8 դասաժամ/ ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար 3*4 չափի,
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,
3. անձը հաստատող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,
5. ինքնակենսագրություն /Ձև 5/,
6. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից 15.00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 09.09.2022թ. ժամը 14.30-ին Երևանի Վ.Տերյանի անվան հ60 հիմնական դպրոցում, հասցեն՝ Տիգրան Մեծի 42:

Տեղեկությունների համար զանգահարել 010550070 հեռախոսահամարով: